

ՄԻԶԱՋԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ԽԱՂԱԴ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ  
1899 ԹՎԱԿԱՆԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ

## ԿՈՆՎԵՆՑԻԱ

Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին\*

Նորին մեծություն գերմանական կայսր՝ Պրուսիայի թագավորը, Նորին մեծություն Ավստրիայի կայսր՝ Բոհեմիայի թագավորը եւ այլք, եւ Հունգարիայի առաքելական թագավորը, Նորին մեծություն Բելգիայի թագավորը, Նորին մեծություն Զինաստանի կայսրը, Նորին մեծություն Դանիայի թագավորը, Նորին մեծություն Իսպանիայի թագավորը եւ նրա անունից Նորին մեծություն Թագավորության թագուհի ռեգենտը, Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահը, Մեքսիկայի Միացյալ Նահանգների նախագահը, Ֆրանսիայի Հանրապետության նախագահը, Նորին մեծություն Մեծ Բրիտանիայի եւ Իռլանդիայի Միացյալ Թագավորության թագուհի՝ Հնդկաստանի կայսրուհին, Հելլենների Նորին մեծություն թագավորը, Նորին մեծություն Իտալիայի թագավորը, Նորին մեծություն Ճապոնիայի կայսրը, Նորին թագավորական մեծություն Լյուքսեմբուրգի Մեծ դուքս՝ Նասաուի դուքսը, Նորին մեծություն Չեռնոգորիայի արքայազնը, Նորին մեծություն Նիդեռլանդների թագուհին, Նորին կայսերական մեծություն Պարսկաստանի շահը, Նորին մեծություն Պորտուգալիայի եւ Ալգարվեների թագավորը եւ այլք, Նորին մեծություն Ռումինիայի թագավորը, Նորին մեծություն Համայն Ռուսիո կայսրը, Նորին մեծություն Սերբիայի թագավորը, Նորին մեծություն Սիամի թագավորը, Նորին մեծություն Շվեդիայի թագավորը, Նորին մեծություն Օսմանյան կայսրը եւ Նորին մեծություն Բուլղարիայի արքայազնը,

---

\* Այստեղ վերարտադրված կոնվենցիայի տեքստը 1899 թվականի Խաղաղության համաժողովում ընդունված ֆրանսերեն տեքստի թարգմանությունն է: Ֆրանսալեզու տարբերակը համարվում է գերակայող:

ոգեշնչված համընդիանուր խաղաղության պահպանման ուղղությամբ աշխատելու մեջ ցանկությամբ,

Վճռականությամբ գործադրելով բոլոր ջանքերը, նպաստելու միջազգային վեճերի բարեկամական կարգավորմանը,

ճանաչելով քաղաքակիրթ ազգերի հասարակության անդամներին միավորող համերաշխությունը,

ցանկանալով ընդլայնել օրենքի գերակայությունը եւ ամրապնդել միջազգային արդարադատության արժևորումը,

համոզված լինելով, որ բոլոր անկախ տերություններին հասանելի մշտական արբիտրաժային Տրիբունալի ստեղծումն արդյունավետ ներդրում կլինի այս արդյունքին հասնելու համար,

հաշվի առնելով արբիտրաժային ընթացակարգի կազմակերպման ընդհանուր եւ մշտական առավելությունները,

համակարծիք լինելով Միջազգային խաղաղության համաժողովի կայսերական նախաձեռնողի հետ, որ նպատակահարմար է Միջազգային համաձայնագրում ամրագրել արդարության եւ իրավունքի սկզբունքները, որոնց վրա հիմնված են պետությունների անվտանգությունը եւ ժողովուրդների բարեկեցությունը,

ցանկություն ունենալով այդ նպատակով կնքելու Կոնվենցիա՝ իրենց լիազոր ներկայացուցիչներ են նշանակել հետեւյալ անձանց,

*(Սպորեւ լիազոր ներկայացուցիչների անունները)*

որոնք, սահմանված կարգի եւ ձեփի շրջանակներում են, ստանձնելով իրենց լիազորությունները, համաձայնության եկան հետեւյալ դրույթների վերաբերյալ.

ՄԱՍ I. ՀԱՄԲՆԴՀԱՆՈՒՐ ԽԱՂԱՊՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

*<ողված 1*

Նպատակ ունենալով որքան հնարավոր է կանխել պետությունների միջեւ հարաբերություններում ուժի կիրառումը, Ստորագրող տերությունները համաձայնում են գործադրել իրենց լավագույն ջանքերը՝ ապահովելու միջազգային տարածայնությունների խաղաղ լուծումը:

ՄԱՍ II. ԲԱՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻԶՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*<ողված 2*

Լուրջ տարածայնության կամ հակասության դեպքում Ստորագրող տերությունները, այնքանով որքանով թույլ են տալիս հանգամանքները, պետք է զենք կիրառելու փոխարեն համաձայնեն դիմել մեկ կամ մի քանի բարեկամ տերությունների բարի ծառայություններից կամ միջնորդությունից օգտվելու հնարավորությանը:

*<ողված 3*

Սույն դիմումից անկախ՝ Ստորագրող տերություններն առաջարկում են, որ վեճի մասնակից չհանդիսացող մեկ կամ մի քանի տերություն սեփական նախաձեռնությամբ, եւ որքանով թույլ են տալիս հանգամանքները, առաջարկեն իրենց բարի ծառայություններն ու միջնորդությունը վեճի մասնակից պետություններին:

Վեճի մասնակից չհանդիսացող տերություններն իրավունք ունեն առաջարկելու իրենց բարի ծառայություններն ու միջնորդությունը նույնիսկ ուազմական գործողությունների ընթացքում:

Այս իրավունքի իրացումը ոչ մի դեպքում այս կամ այն վեճի մասնակցի կողմից չաետք է դիտարկվի որպես ոչ բարեկամական գործողություն:

#### *Հոդված 4*

Միջնորդի խնդիրն է հաշտեցնել հակառակ պահանջները եւ նվազեցնել թշնամանքի զգացումը, եթե այն ծագել է վեճի մասնակից պետությունների միջեւ:

#### *Հոդված 5*

Միջնորդի գործառությները դադարում են այն պահին, երբ վիճող կողմերից մեկը կամ ինքը՝ միջնորդը, հայտարարում է, որ առաջարկվող հաշտություն միջոցները չեն ընդունվում:

#### *Հոդված 6*

Թե՛ վեճի կողմերի խնդրանքով, թե՛ վեճի կողմ չհանդիսացող տերությունների նախաձեռնությամբ կիրառվող բարի ծառայությունները եւ միջնորդությունն ունեն բացառապես խորհրդատվական բնույթ եւ ոչ մի դեպքում չունեն պարտադիր ուժ:

#### *Հոդված 7*

Միջնորդության ընդունումը չի կարող լինել զորահավաքի կամ պատերազմի պատրաստվելու այլ միջոցառումների ընդհատման, հետաձգման, դանդաղեցման կամ խոչընդոտման պատճառ, քանի դեռ հակառակի վերաբերյալ համաձայնություն չկա:

Եթե միջնորդությունը տեղի է ունենում ռազմական գործողություններն սկսվելուց հետո, այն չի հանգեցնում ընթացիկ ռազմական գործողությունների դադարեցման, եթե չկա հակառակ համաձայնություն:

## Հոդված 8

Ստորագրող տերությունները միաձայն առաջարկում են հետեւյալ հատուկ միջնորդության կիրառումն այն դեպքերում, երբ հանգամանքները թույլ են տալիս.

Լուրջ տարածայնության դեպքում, երբ վտանգված է խաղաղությունը, վեճի մասնակից հանդիսացող կողմերը համապատասխանորեն ընտրում են տերություն, որին լիազորում են հակառակ կողմի ընտրած տերության հետ ուղիղ բանակցություններ վարելու առաքելությունը, խաղաղ հարաբերությունների խզումը կանխելու նպատակով:

Սույն մանդատի գործողության ժամանակահատվածում, որի ժամկետը, եթե այլ բան սահմանված չէ, չի կարող գերազանցել երեսուն օրը, վեճի մասնակից պետությունները դադարեցնում են վեճի առարկային առնչվող բոլոր ուղղակի հաղորդակցությունները միմյանց հետ, որը համարվում է փոխանցված բացառապես միջնորդ տերություններին, որոնք պետք է գործադրեն լավագույն ջանքերը վեճի կարգավորման նպատակով:

Խաղաղ հարաբերությունների խզման դեպքում այս տերություններն ունեն ընդհանուր պարտավորություններ՝ օգտագործելու ցանկացած հնարավորություն խաղաղության վերականգնման համար:

## ՄԱՍ III. ՄԻԶԱՉԳԱՅԻՆ ՔՆՍԻՉ ՀԱՆՁԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

## Հոդված 9

Միջազգային վեճերում, որոնք չեն առնչվում ո՞չ պատվին, ո՞չ էլ կենսական շահերին եւ բխում են փաստերի գնահատման շուրջ ունեցած տարակարծությունից, կողմերի դիվանագիտական համաձայնության չհասնելու դեպքում այնքանով, որքանով թույլ են տալիս հանգամանքները, Ստորագրող տերություններն առաջարկում են անկողմնակալ եւ արդար քննության միջոցով փաստերի պարզաբանմամբ վեճերը լուծելու նպատակով հիմնել Միջազգային քննիչ

հանձնաժողով:

#### Հոդված 10

Միջազգային քննիչ հանձնաժողովները ստեղծվում են վիճող կողմերի միջեւ կնքվող հատուկ համաձայնագրով:

Քննության իրականացման վերաբերյալ համաձայնագրով սահմանվում են քննության ենթակա փաստերն ու Հանձնակատարների լիազորությունների շրջանակը:

Այն սահմանում է ընթացակարգը:

Քննությունն իրականացնելիս երկու կողմերն էլ պետք է լսվեն:

Նախատեսված ծելը եւ ժամկետները սահմանվում են Հանձնաժողովի կողմից, եթե ամրագրված չեն Քննության իրականացման վերաբերյալ համաձայնագրով:

#### Հոդված 11

Եթե այլ բան սահմանված չէ, ապա Միջազգային քննիչ հանձնաժողովները ձեռավորվում են սույն Կոնվենցիայի 32-րդ հոդվածով նախատեսված կարգով:

#### Հոդված 12

Վեճի կողմ հանդիսացող տերությունները Միջազգային քննիչ հանձնաժողովին հնարավորինս տրամադրում են բոլոր այն միջոցներն ու հնարավորությունները, որոնք անհրաժեշտ են փաստերին ամբողջովին ծանոթանալու եւ դրանք ճշգրիտ հասկանալու համար:

#### Հոդված 13

Միջազգային քննիչ հանձնաժողովը վիճող տերություններին է ներկայացնում

Հանձնաժողովի բոլոր անդամների կողմից ստորագրված իր Զեկույցը:

#### Հոդված 14

Միջազգային քննիչ հանձնաժողովի Զեկույցն ունի բացառապես փաստերն արձանագրող բնույթ եւ ոչ մի պարագայում չի կարող համարվել Արբիտրաժային վճիռ: Վիճող տերությունները լիովին ազատ են ըստ իրենց հայեցողության տնօրինելու այդ փաստերը:

### ՄԱՍ IV. ՄԻԶԱՉԳԱՅԻՆ ԱՐԲԻՏՐԱԺԻ ՄԱՍԻՆ

#### Գլուխ I. Արբիտրաժային համակարգի մասին

#### Հոդված 15

Միջազգային արբիտրաժի նպատակն է լուծել պետությունների միջեւ տարածայնություններն այդ պետությունների կողմից ընտրված դատավորների միջոցով՝ պահպանելով օրենքի նկատմամբ հարգանքը:

#### Հոդված 16

Իրավական բնույթի հարցերի, մասնավորապես՝ Միջազգային կոնվենցիաների մեկնաբանման կամ կիրառման դեպքում արբիտրաժը Ստորագրող տերությունների կողմից ճանաչվում է ամենաարդյունավետ եւ միեւնույն ժամանակ ամենաանկողմնակալ միջոցը՝ լուծելու այն վեճերը, որոնք չի հաջողվել լուծել դիվանագիտական ճանապարհով:

#### Հոդված 17

Արբիտրաժային համաձայնագիրը կնքվում է արդեն իսկ գոյություն ունեցող կամ ապագայում ծագող վեճերի լուծման համար:

Այն կարող է ընդգրկել ցանկացած վեճ կամ միայն որոշակի բնույթ ունեցող վեճեր:

### *Հոդված 18*

Արբիտրաժային համաձայնագրի իրականացումը ենթադրում է Արբիտրաժային վճոհ բարեխիղճ կատարում:

### *Հոդված 19*

Անկախ ընդհանուր կամ մասնավոր Պայմանագրերից, որոնցով սահմանվում են Ստորագրող տերությունների արբիտրաժ դիմելու պարտավորությունները, այդ տերություններն իրավունք ունեն նախքան սույն փաստաթղթի վավերացումը կամ վավերացումից հետո կնքելու ընդհանուր կամ մասնավոր Նոր համաձայնագրեր՝ նպատակ ունենալով պարտադիր արբիտրաժի միջոցով քննության հանձնել բոլոր գործերը, որոնք կհամարեն արբիտրաժի միջոցով քննման ենթակա:

## **Գլուխ II. Մշտական արբիտրաժային դատարանի մասին**

### *Հոդված 20*

Ցանկանալով ստեղծել դիվանագիտական ճանապարհով չկարգավորված միջազգային տարածայնությունների դեպքում անհապաղ արբիտրաժի դիմելու հնարավորություն՝ Ստորագրող տերությունները պարտավորվում են հիմնել Մշտական արբիտրաժային դատարան, որը հասանելի կլինի ցանկացած ժամանակ եւ կգործի, եթե կողմերը սույն Կոնվենցիայի ընթացակարգային

կանոնների համաձայն այլ բան չեն սահմանում:

### Հոդված 21

Մշտական դատարանն իրավասու է քննել բոլոր արբիտրաժային գործերը, բացառությամբ այն դեպքերի, երբ կողմերը համաձայնում են ստեղծել հատուկ Տրիբունալ:

### Հոդված 22

Հաագայում հիմնադրված Միջազգային բյուրոն ծառայում է որպես Դատարանի քարտուղարություն:

Սույն Բյուրոն Դատարանի վարույթների հետ կապված հաղորդակցության ուղին է: Նրան է վստահվում արխիվների պահպանման առաքելությունը եւ վարչական գործունեության իրականացումը:

Ստորագրող տերություններն իրենց միջեւ կնքված արբիտրաժային ցանկացած համաձայնագրի, ինչպես նաև հատուկ Տրիբունալների կողմից կայացված ցանկացած արբիտրաժային վճիռի վավերացված օրինակները պարտավորվում են փոխանցել Միջազգային բյուրոյին՝ Հաագա:

Նրանք նաև պարտավորվում են Բյուրոյին փոխանցել օրենքները, կարգավորումները եւ փաստաթղթերը, որոնք հավաստում են Դատարանի կողմից կայացված Արբիտրաժային վճիռների կատարումը:

### Հոդված 23

Յուրաքանչյուր Ստորագրող տերություն սույն փաստաթղթի վավերացումից հետո երեք ամսվա ընթացքում պետք է ընտրի ոչ ավել, քան չորս անձ, որոնք քաջատեյակ են միջազգային իրավունքին, ունեն բարձր բարոյական համբավ և պատրաստակամ են ստանձնելու Արբիտրի պարտականությունները:

Ընտրված անձինք որպես Դատարանի անդամներ գրանցվում են ցուցակում, որի մասին Բյուլոն ծանուցում է բոլոր Ստորագրող տերություններին:

Արբիտրների ցուցակում ցանկացած փոփոխության մասին Բյուլոն ծանուցում է Ստորագրող տերություններին:

Երկու կամ ավելի տերություններ կարող են համաձայնել մեկ կամ մի քանի անդամի ընտրության վերաբերյալ: Միեւնույն անձը կարող է ընտրվել տարբեր տերությունների կողմից:

Դատարանի անդամները նշանակվում են վեց տարի պաշտոնավարման ժամկետով: Նրանք ունեն վերընտրվելու իրավունք:

Դատարանի անդամի մահվան կամ հրաժարականի դեպքում թափուր տեղը համալրվում է նոյն ընթացակարգով:

## Հոդված 24

Եթե Ստորագրող տերությունները ցանկանում են դիմել Մշտական արբիտրաժային դատարան իրենց միջեւ ծագած տարածայնությունը լուծելու, այդ տարածայնությունը լուծող իրավասու Տրիբունալ կազմելու համար Արբիտրների ընտրությունը կատարվում է Դատարանի անդամների հիմնական ցուցակից:

Այն դեպքում, եթե Արբիտրաժային տրիբունալի կազմը չի որոշվում կողմերի ուղղակի համաձայնությամբ, կիրառվում է հետեւյալ կարգը:

Յուրաքանչյուր կողմ նշանակում է երկու Արբիտր եւ վերջիններս միասին ընտրում են մեկ Նախագահող արբիտր:

Զայների հավասարության դեպքում Նախագահի ընտրությունը վստահվում է կողմերի համատեղ որոշմամբ ընտրված երրորդ տերությանը:

Եթե այս հարցի վերաբերյալ համաձայնություն ձեռք չի բերվում, ապա յուրաքանչյուր կողմ ընտրում է այլ տերություն, եւ Նախագահող արբիտրի

ընտրությունը կատարվում է ընտրված տերությունների կողմից:

Այն բանից հետո, երբ կազմվում է Տրիբունալը, կողմերը ծանուցում են Բյուրոյին Դատարան դիմելու իրենց որոշման մասին եւ ներկայացնում են Արքիտրների անունները:

Արքիտրաժային տրիբունալը նիստ է իրավիրում կողմերի նշանակած ամսաթվին:

Դատարանի անդամներն իրենց պարտականություններն իրականացնելիս եւ իրենց երկրից դուրս գտնվելիս ունեն դիվանագիտական արտոնություն եւ իմունիտետ:

### Հոդված 25

Արքիտրաժային տրիբունալը Հաագայում ունի մշտական նստավայր:

Բացառությամբ անհրաժեշտ դեպքերի՝ կողմերի համաձայնությամբ նիստի վայրը կարող է փոխվել միայն Տրիբունալի կողմից:

### Հոդված 26

Հաագայում Միջազգային բյուրոն իրավասու է Ստորագրող տերությունների տիրապետմանը հանձնել իր տարածքներն ու աշխատակազմը ցանկացած հատուկ Արքիտրաժային խորհրդի գործունեության իրականացման համար:

Մշտական դատարանի իրավագորությունը կարող է Կանոնակարգով սահմանված դեպքերում տարածվել Ստորագրող չհանդիսացող տերությունների կամ Ստորագրող տերությունների եւ Ստորագրող չհանդիսացող տերությունների միջեւ վեճերի վրա, եթե կողմերը համաձայնում են դիմել այս Տրիբունալին:

### Հոդված 27

Երկու կամ ավելի կողմերի միջեւ լուրջ վեճի ծագման վտանգի առկայության դեպքում Ստորագրող տերություններն իրենց պարտականությունն են համարում վերջիններիս հիշեցնել Մշտական դատարանի դիմելու հնարավորության մասին:

Հետևաբար նրանք հայտարարում են, որ կողմերին սույն Կոնվենցիայի դրույթների մասին հիշեցնելը եւ խաղաղության շահերից ենելով Մշտական դատարան դիմելու հարցում նրանց ուղղորդելն ինքնին համարվում են բարի ծառայություններ:

### *Հոդված 28*

Առնվազն ինը տերությունների կողմից սույն փաստաթղթի վավերացումից հետո՝ հնարավորինս շուտ, այս քաղաքում կիմնվի Մշտական վարչական խորհուրդ, որի կազմում կընդգրկվեն Ստորագրող տերությունների՝ Հաագայում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցիչները եւ Նիդեոլանդների արտաքին գործերի նախարարը՝ հանդես գալով որպես Նախագահ:

Այս խորհուրդը պատասխանատու կլինի Միջազգային բյուրոյի ստեղծման եւ կազմակերպման համար, որը կլինի նրա ղեկավարման եւ հսկողության ներքո:

Այն կծանուցի տերություններին Դատարանի կազմավորման վերաբերյալ եւ կապահովի դրա հիմնադրումը:

Այն կիաստատի իր ընթացակարգային կանոնները եւ մյուս բոլոր անհրաժեշտ կարգավորումները:

Այն կլուծի Դատարանի գործունեության հետ կապված բոլոր վարչական հարցերը:

Այն լիարժեք վերահսկողություն կունենա պաշտոնատար անձանց եւ Բյուրոյի աշխատակիցների նշանակման, լիազորությունների դադարեցման կամ աշխատանքից ազատման հարցում:

Այն կսահմանի վճարումներն ու աշխատավարձը եւ կվերահսկի ընդհանուր

ծախսերը:

Նիստերին պատշաճ կերպով հրավիրված հինգ անդամների ներկայությունը բավարար է Խորհրդի քննարկումները վավեր ճանաչելու համար: Որոշումները կայացվում են ծայների մեծամասնությամբ:

Խորհրդու Ստորագրող տերություններին անհապաղ ներկայացնում է իր կողմից ընդունված Կանոնակարգը: Այն վերջիններիս տարեկան Հաշվետվություն է ներկայացնում դատարանի գործունեության, վարչական մարմնի աշխատանքի եւ ծախսերի մասին:

### *Հոդված 29*

Բյուրոյի ծախսերը հոգում են Ստորագրող տերությունները Համաշխարհային փոստային միության կողմից Միջազգային բյուրոյի համար սահմանված չափաբաժնով:

### **Գլուխ III. Արբիտրաժային ընթացակարգի մասին**

#### *Հոդված 30*

Արբիտրաժի գարգացմանը նպաստելու նպատակով Ստորագրող տերությունները համաձայնության են եկել արբիտրաժի ընթացակարգի համար կիրառել հետեւյալ Կանոնները, եթե այլ Կանոնների կիրառման վերաբերյալ կողմերը համաձայնության չեն եկել:

#### *Հոդված 31*

Արբիտրաժին դիմող տերությունները ստորագրում են հատուկ ակտ («Փոխզիջում» [Compromis]), որը հստակ սահմանում է տարածայնության առարկան, ինչպես նաև Արբիտրների լիազորությունների շրջանակը: Այս ակտը

պարտավորեցնում է կողմերին հավատարմություն ցուցաբերել Արքիտրաժային վճռի նկատմամբ:

### Հոդված 32

Արքիտրի պարտականությունները կարող են որվել մեկ կամ մի քանի Արքիտրների վրա, որոնց ընտրում են կողմերը սույն փաստաթղթով հոչակված Մշտական արքիտրաժային դատարանի անդամների ցանկից կամ իրենց հայեցողությամբ:

Եթե Արքիտրաժային դատարանը չի կազմավորվում կողմերի համաձայնությամբ, ապա կիրառվում է հետեւյալ ընթացակարգը:

Յուրաքանչյուր կողմ նշանակում է երկու Արքիտր, եւ վերջիններս միասին ընտրում են Նախագահող արքիտր:

Զայների հավասարության դեպքում Նախագահող արքիտրի ընտրությունը վստահվում է կողմերի միաձայն որոշմամբ ընտրված երրորդ տերությանը:

Եթե այս հարցի վերաբերյալ համաձայնություն ձեռք չի բերվում, ապա յուրաքանչյուր կողմ ընտրում է առանձին տերություն, իսկ Նախագահող արքիտրի ընտրությունը կատարվում է այս մեթոդով ընտրված տերությունների կողմից:

### Հոդված 33

Այն դեպքում, եթե Արքիտր է ընտրվում միապետը կամ պետության ղեկավարը, արքիտրաժային ընթացակարգը սահմանվում է նրա կողմից:

### Հոդված 34

Նախագահող արքիտրն ի պաշտոնե համարվում է Տրիբունալի նախագահ:

Այն դեպքում, եթե Տրիբունալը չի ունենում Նախագահող արքիտր, այն իր համար նշանակում է Նախագահ:

### Հոդված 35

Արքիտրներից որեւէ մեկի մահվան, իրաժարականի կամ ցանկացած պատճառով պարտականությունների կատարման անհնարինության դեպքում թափուր տեղը համալրվում է միեւնույն նշանակման մեթոդով:

### Հոդված 36

Տրիբունալի նիստի անցկացման վայրն ընտրում են կողմերը: Ընտրություն չկատարվելու դեպքում Տրիբունալը նիստն անցկացնում է Հաագայում:

Այս կերպ ընտրված վայրը, բացառությամբ անհրաժեշտ դեպքերի, չի կարող փոփոխվել Տրիբունալի կողմից՝ առանց կողմերի համաձայնության:

### Հոդված 37

Կողմերն իրավունք ունեն Տրիբունալում նշանակելու պատվիրակներ կամ հատուկ ներկայացուցիչներ՝ իրենց եւ Տրիբունալի միջեւ որպես միջնորդներ հանդես գալու համար:

Նրանք իրավասու են նաեւ Տրիբունալի առջեւ իրենց իրավունքների եւ շահերի պաշտպանության համար ունենալ իրենց կողմից այդ նպատակով նշանակված իրավախորհրդատու կամ փաստաբան:

### Հոդված 38

Տրիբունալը որոշում է կայացնում իր կողմից կիրառվող լեզուների եւ այն լեզուների մասին, որոնք կթույլատրվեն կիրառել իր վարույթներում:

### Հոդված 39

Որպես կանոն արքիտրաժային ընթացակարգը կազմված է երկու առանձին

փոկերից՝ նախնական քննություն եւ լսումներ:

Նախնական քննությունը երկու կողմերի ներկայացուցիչների կողմից Տրիբունալին եւ հակառակորդ կողմին բոլոր տպագիր եւ գրավոր ակտերի եւ գործում բերված փաստարկները պարունակող բոլոր փաստաթղթերի տրամադրումն է: Այս հաղորդակցումն իրականացվում է Տրիբունալի կողմից 49-րդ հոդվածի համաձայն սահմանված ձեռվ եւ ժամկետներում:

Լսումները կողմերի փաստարկների բանավոր շարադրանքն է Տրիբունալի առջեւ:

#### *Հոդված 40*

Մեկ կողմի ներկայացրած յուրաքանչյուր փաստաթուղթ պետք է փոխանցվի նաեւ մյուս կողմին:

#### *Հոդված 41*

Լսումներն իրականացվում են Նախագահի վերահսկողության ներքո:

Դրանք հանրային են միայն Տրիբունալի որոշմամբ՝ կողմերի համաձայնության դեպքում:

Դրանք ներառվում են արձանագրության մեջ, որը կազմվում է Նախագահի կողմից նշանակված Քարտուղարների կողմից: Այդ արձանագրությունը համարվում է բնօրինակ:

#### *Հոդված 42*

Նախնական քննությունն ավարտվելուց հետո Տրիբունալն իրավունք ունի արգելելու բոլոր նոր ակտերի կամ փաստաթղթերի քննարկումը, որոնք կողմերից մեկը ցանկություն է հայտնում ներկայացնել առանց մյուս կողմի համաձայնության:

#### *Հոդված 43*

Տրիբունալն իրավասու է քննության առնել այն նոր ակտերն ու փաստաթղթերը, որոնց հանդեպ իր ուշադրութունը կիրավիրեն կողմերի ներկայացուցիչները կամ իրավախորհրդատուները:

Այս դեպքում Տրիբունալն իրավասու է պահանջել այդ ակտերի եւ փաստաթղթերի ներկայացումը՝ այդ մասին հակառակ կողմին պարտադիր տեղեկացնելով:

#### *Հոդված 44*

Տրիբունալը կարող է կողմերի ներկայացուցիչներից պահանջել ներկայացնել բոլոր ակտերը եւ պահանջել բոլոր անհրաժեշտ բացատրությունները: Մերժման դեպքում Տրիբունալն այս մասին գրառում է կատարում:

#### *Հոդված 45*

Կողմերի ներկայացուցիչներն ու իրավախորհրդատուներն իրավունք ունեն Տրիբունալին բանավոր ներկայացնելու բոլոր փաստարկները, որոնք համարում են անհրաժեշտ իրենց գործի պաշտպանության համար:

#### *Հոդված 46*

Նրանք իրավունք ունեն ներկայացնելու առարկություններ եւ բարձրացնելու հարցեր:

Տրիբունալի որոշումները դրանց վերաբերյալ վերջնական են եւ չեն կարող հետագա որեւէ լսման առարկա դառնալ:

#### Հոդված 47

Տրիբունալի անդամներն իրավունք ունեն հարցեր առաջադրելու կողմերի ներկայացուցիչներին եւ իրավախորհրդատուներին, ինչպես նաև բացատրություններ պահանջելու կասկածելի հարցերի վերաբերյալ:

Ո՞չ լսումների ընթացքում առաջադրված հարցերը, ո՞չ էլ Տրիբունալի անդամների կողմից ներկայացված մեկնաբանությունները չեն կարող համարվել Տրիբունալի կամ անդամների կողմից ներկայացված ընդհանրական կարծիք:

#### Հոդված 48

Տրիբունալը լիազորված է հայտարարել «Փոխգիշման», ինչպես նաև գործի շրջանակներում վկայակոչվող այլ Պայմանագրերի մեկնաբանման եւ միջազգային իրավունքի սկզբունքների կիրառման մասով իր իրավասության մասին:

#### Հոդված 49

Տրիբունալն իրավունք ունի սահմանելու գործի վարման Ընթացակարգային կանոններ, որոշելու այն ձեւերն ու ժամկետները, որոնց շրջանակներում յուրաքանչյուր կողմ պետք է ամփոփի իր փաստարկները, ինչպես նաև սահմանելու ապացույցների ներկայացման համար անհրաժեշտ բոլոր ձեւական պահանջները:

#### Հոդված 50

Եթե կողմերի ներկայացուցիչներն ու իրավախորհրդատուները ներկայացնում են իրենց գործը հիմնավորող բոլոր բացատրությունները և փաստարկները, Նախագահը լսումները հայտարարում է ավարտված:

#### Հոդված 51

Տրիբունալի խորհրդակցություններն անցկացվում են դռնփակ:

Յուրաքանչյուր որոշում կայացվում է Տրիբունալի անդամների ձայների մեծամասնությամբ:

Անդամի՝ քվեարկությունից հրաժարվելը պետք է ներառվի արձանագրության մեջ:

#### *Հոդված 52*

Զայների մեծամասնությամբ կայացված Արբիտրաժային վճիռն կցվում է դրա պատճառաբանական մասը: Այն կազմվում է գրավոր եւ ստորագրվում Տրիբունալի յուրաքանչյուր անդամի կողմից:

Այն անդամները, որոնք փոքրամասնություն են կազմում, կարող են ստորագրելիս արձանագրել իրենց անհամաձայնությունը:

#### *Հոդված 53*

Արբիտրաժային վճիռն ընթերցվում է Տրիբունալի դռնբաց նիստում՝ կողմերի ներկայացուցիչների եւ իրավախորհրդատուների ներկայությամբ կամ բացակայությամբ, եթե վերջիններիս պատշաճ ծանուցվել են:

#### *Հոդված 54*

Արբիտրաժային վճիռը, որը պատշաճ կերպով ընթերցվել եւ ծանուցվել է վեճի կողմերի ներկայացուցիչներին, վերջնականապես եւ առանց բողոքարկման հնարավորության վերջ է դնում վեճին:

#### *Հոդված 55*

Կողմերը կարող են «Փոխգիշման» միջոցով իրենց վերապահել

Արքիտրաժային վճոհ վերանայում պահանջելու իրավունք:

Այս դեպքում, եթե այլ բան համաձայնեցված չէ, վերանայման պահանջը պետք է ներկայացվի Արքիտրաժային վճիռը կայացրած Տրիբունային:

Դա կարող է արվել միայն որոշ նոր փաստերի հայտնաբերման դեպքում, որոնք կարող են որոշիչ ազդեցություն ունենալ Արքիտրաժային վճիռ կայացնելու հարցում, եւ որոնք լսումներն ավարտելու պահին հայտնի չեն եղել Տրիբունային եւ վերանայում պահանջող կողմին:

Վերանայման վարույթ կարող է հարուցվել միայն Տրիբունայի որոշմամբ, որն ուղղակիորեն արձանագրում է նոր փաստի առկայությունը՝ դրանում ճանաչելով նախորդ պարբերության մեջ նկարագրված բնույթը, եւ այդ հիմքով պահանջը հայտարարում ընդունելի:

«Փոխգիշմամբ» սահմանվում է վերանայման պահանջի ներկայացման ժամկետը:

### <Հոդված 56

Արքիտրաժային վճիռը պարտադիր է միայն այն կողմերի համար, որոնք կնքել են «Փոխգիշում»:

Եթե հարց է ծագում մեկնաբանելու Կոնվենցիան, վեճի կողմերը ծանուցում են իրենց կնքած «Փոխգիշման» մասին Կոնվենցիայի անդամ՝ վեճի կողմ չհանդիսացող տերություններին: Այս տերություններից յուրաքանչյուրն իրավունք ունի ներգրավվելու գործին: Եթե նրանցից մեկը կամ մի քանիսն օգտվում են այս իրավունքից, ապա Արքիտրաժային վճոհ մեջ ներառված մեկնաբանությունը հավասարապես պարտադիր է դառնում նրանց համար:

### <Հոդված 57

Յուրաքանչյուր կողմ վճարում է իր սեփական ծախսերը եւ Տրիբունայի ծախսերի հավասար բաժինը:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### Հոդված 58

Սույն Կոնվենցիան վավերացվում է հնարավորինս արագ:

Վավերացման մասին փաստաթղթերը պահպանվում են Հաագայում:

Յուրաքանչյուր վավերացման համար կազմվում է ի պահ հանձնման արձանագրություն, եւ արձանագրության վավերացված պատճենը դիվանագիտական ուղիներով ուղարկվում է Հաագայում Խաղաղության միջազգային համաժողովում ներկայացված բոլոր տերություններին:

### Հոդված 59

Չստորագրած տերությունները, որոնք ներկայացված են Խաղաղության միջազգային համաժողովում, կարող են միանալ սույն Կոնվենցիային: Այդ նպատակով նրանք պետք է Պայմանավորվող տերություններին հայտնեն իրենց միանալու մասին՝ գրավոր ծանուցմամբ դիմելով Նիդեղանդների կառավարությանը. իսկ վերջինս կծանուցի մյուս բոլոր Պայմանավորվող տերություններին:

### Հոդված 60

Խաղաղության միջազգային համաժողովում չներկայացված տերությունների՝ Կոնվենցիային միանալու պայմանները ենթակա են Պայմանավորվող տերությունների հետագա համաձայնեցման:

### Հոդված 61

Այն դեպքում, եթե Բարձր պայմանավորվող կողմերից մեկը չեղարկում է սույն

Կոնվենցիան, այդ չեղարկումն ուժի մեջ է մտնում Նիդեռլանդների կառավարությանը գրավիր ծանուցում ներկայացնելուց միայն մեկ տարի անց, իսկ վերջինս այդ մասին անմիջապես ծանուցում է մյուս բոլոր Պայմանավորվող տերություններին:

Այդ չեղարկումն ազդեցություն է ունենում միայն ծանուցում ներկայացնող տերության վրա:

Ի հավաստումն վերոգրյալի՝ լիազորված ներքոստորագրյալները ստորագրում են սույն Կոնվենցիան եւ դնում իրենց կնիքները:

Կատարված է Հաագայում 1899 թվականի հուլիսի 29-ին, մեկ օրինակից, որը պահվում է Նիդեռլանդների կառավարության արխիվում, իսկ դրա՝ պատշաճ կերպով վավերացված օրինակները դիվանագիտական ուղիներով ուղարկվում են Պայմանավորվող տերություններին:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 1899 թվականի հուլիսի 29-ին  
ստորագրված «Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին» կոնվենցիայի  
հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության  
արտաքին գործերի նախարարություն**